

## ՄԻՐԱՀԱՐՆԵՐԻ ԱՅԳՈՒ ՑԱՆԿԱՊԱՏԻ ԱՅՍ ԿՈՂՄԻՑ

«Ովքեր սիրահարված չեն, ներս չեն թողնում», երեկ կատակում էին «Սիրահարների այգու» ճաղաշարից այս կողմ (դրսում) կանգնածները: «Է՛հ, ո՞նց ես ապացուցելու, սիրահարված ես, թե՞ չէ, վկայական չկա, որ ցույց տաս»: «Ինչ վկայական, սիրահարվածությունն աչքերից է երեւում»: «Հիմա ո՞վ է մարդու աչքերին նայում», խոսք ու զրույցի մեջ էին անհրավիրատոմս հասարակ քաղաքացիները: Ներսում պաշտոնական բացման հրավիրյալներն էին՝ պաշտոնական հյուրերը:

«Լավ են սարքել, բայց եթե պահպանեն, մերոնց չգիտե՞ք, մի քանի օրից կավերեն»: «Նախկին վայրի տեսքն ավելի հետաքրքրական էր, հիմա ձեւական տեսք ունի»: Հարեւան շենքի տարեց բնակչուհին հիշում է 1958-ը, երբ այգում կյանքը շատ աշխույժ էր, փողային նվագախումբ էր նվագում, մարդիկ ուրախ էին: Այգու մուտքի հարակից փողոցը՝ այժմ Դեմիրճյանի անվան, նախկինում Սիրահարների փողոց է կոչվել, այգին էր, ասում է կինը, հետո փոխվել է Պուշկինի անվան: «Ինչո՞ւ Պուշկինի», հարցնում եմ կնոջը: Նա թե՛ Պուշկինն անտարբեր չէր, չէ՛, կանանց նկատմամբ:

Անհրավիրատոմսերը սպասում էին այգի մտնելու իրենց ժամին: Մեկն ասում էր, թե այգին մինչև գիշերվա մեկն է բաց լինելու, հետո փակելու են: Տարեց կինը զարմանում է. «Սիրահարները հենց էդ ժամին են սպասում, որ այգի մտնեն»: Երիտասարդ մի կին երկու երեխայով այգու մետրոյի մուտքի աստիճաններով դժգոհ վեր է բարձրանում. «Այսօր են հայտարարել այգու բացման մասին, թող ասեին, որ հրավիրատոմսերով է»: Մեկն էլ թե՛ «Էսպես են անում, որ ժողովրդին իրենցից հեռացնում են»:

Ես էլ անվան թյուրիմացության պատճառով մուտքի թույլտվությունից զրկվեցի, ասացին՝ դրսից հիացեք: Դրսից մի քիչ դժվար է հիանալ, ու ակամա ունկնդիրն ու մասնակիցը դարձա այգու մյուս կողմի «ելույթներին»:

Իսկ նրանք հիմնականում տարեցներ էին կամ երեխաներով ծնողներ: Տարեցներն, ինչպես միշտ, անցյալն են հիշում, թե ինչպես, օրինակ՝ «Կարեն Դեմիրճյանն օպերայի վերանորոգման ժամանակ գալիս էր շինարարությանը հետեւելու, բոլորին բարեւում էր, հարց ու փորձ անում: Հիմա ամեն մեկի հետեւից ախրաննիկների մի բանակ է գնում»: Պետանվտանգության ծառայողներից իմացանք, որ քաղաքացիների մուտքն այգի թույլատրվելու է հաջորդ օրվանից, իսկ այգին միշտ բաց է լինելու:

Դրսից շատ բան չերեւաց: Կողքիս կանգնած նախկին շինարար-նախագծողը՝ այժմ թոշակառու, տեղյակ էր այգու շինարարությունից ու նկարագրեց. ձայնող երկու ջրվեժ, հոսող ջրերի կուտակումներից լճակ, հողե թմբեր՝ կանաչապատ, բլրակներ հիշեցնող, քարերից լեռների նմանեցված բարձունքներ, արահետներ՝ գետի հուն հիշեցնող, ծաղկապատումներ, նստարաններ, տաղավարներ. փորձ է արվել բնական միջավայր ստեղծելու, կան նաեւ մանկական ջրավազան, բացօթյա համերգահարթակ, նախկին կարուսելը հանված է, ծառերը մշակված են եւ այլն:

Պաշտոնական բացման արարողությունը մեր տեսադաշտից բավական հեռու էր եւ, բնականաբար, ոչինչ լսելի չէր: Ներկա էին ՀՀ նախագահը, բարձրաստիճան պաշտոնյաներ, մտավորական ծանոթ դեմքեր:

Այգու շինարարությունը սկսվել է անցած տարվանից, ներդնողներն են Հայր եւ որդի Պողոսյան հիմնադրամը, մասամբ՝ «Հայաստան» հիմնադրամը: Շինարարությունն իրականացրել է «Երեւան նախագիծը», ճարտարապետը շվեյցարացի է, մասնագիտացված այգիների ուղղությամբ էր բժախնդիր հետեւել է այգու ձեւավորման ընթացքին:

*ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ*